**Համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ**
**Վարչության 15.10.2021 թվականի որոշման**
**Գործում է 22.10.2021 թվականից**

# ABB – ԷՔՍՏՐԱ և ABB – ԷՔՍՏՐԱ+
# ՎԱՐԿԱՏԵՍԱԿԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Անշարժ և շարժական գույքի ապահովվածությամբ ֆիզիկական անձանց տրամադրվող վարկերի և վարկային գծերի պայմաններն ու սակագները (սեփական ռեսուրսներով)

| **1.** | **Վարկի/Վարկային գծի պայմաններ** | **ABB – ԷՔՍՏՐԱ**<br>Վարկ | | **ABB – ԷՔՍՏՐԱ+**<br>Վարկային գիծ | |
|---|---|---|---|---|---|
| 1.1 | Արժույթ | ՀՀ դրամ | | ԱՄՆ դոլար<br>Եվրո | |
| 1.2 | Վարկառուի եկամուտներ | Պահանջվում է | Չի պահանջվում | Պահանջվում է | Չի պահանջվում |
| 1.3 | Տարեկան անվանական տոկոսադրույք | **AMD**<br>**ԱԳ դեպքում՝**<br>15-24 ամիս մարման դեպքում- 15.0%,<br>25-36 ամիս մարման դեպքում – 16.0%,<br>37 և ավել ամիս մարման դեպքում- 17.0%<br><br>**ՏՄ դեպքում՝**<br>15-24 ամիս մարման դեպքում- 16.0%,<br>25-36 ամիս մարման դեպքում – 17.0%,<br>37 և ավել ամիս մարման դեպքում- 17.0% | **AMD**<br>**ԱԳ դեպքում՝**<br>15-24 ամիս մարման դեպքում- 17.0%,<br>25-36 ամիս մարման դեպքում – 18.0%,<br>37 և ավել ամիս մարման դեպքում- 19.0%<br><br>**ՏՄ դեպքում՝**<br>15-24 ամիս մարման դեպքում- 18.0%,<br>25-36 ամիս մարման դեպքում – 19.0%,<br>37 և ավել ամիս մարման դեպքում- 20.0% | **USD**<br>**ԱԳ դեպքում՝**<br>15-24 ամիս մարման դեպքում- 12.0%,<br>25-36 ամիս մարման դեպքում – 13.0%,<br>37 և ավել ամիս մարման դեպքում- 14.0%<br><br>**ՏՄ դեպքում**<br>15-24 ամիս մարման դեպքում- 13.0%,<br>25-36 ամիս մարման դեպքում – 14.0%,<br>37 և ավել ամիս մարման դեպքում- 15.0%<br><br>**EUR**<br>**ԱԳ դեպքում՝**<br>15-24 ամիս մարման դեպքում- 10.0%,<br>25-36 ամիս մարման դեպքում – 11.0%,<br>37 և ավել ամիս մարման դեպքում- 12.0%<br>**ՏՄ դեպքում՝**<br>15-24 ամիս մարման դեպքում- 11.0%,<br>25-36 ամիս մարման դեպքում – 12.0%,<br>37 և ավել ամիս մարման դեպքում- 13.0% | **USD**<br>**ԱԳ դեպքում՝**<br>15-24 ամիս մարման դեպքում- 13.5%,<br>25-36 ամիս մարման դեպքում – 14.5%,<br>37 և ավել ամիս մարման դեպքում- 15.5%<br><br>**ՏՄ դեպքում**<br>15-24 ամիս մարման դեպքում- 14.5%,<br>25-36 ամիս մարման դեպքում – 15.5%,<br>37 և ավել ամիս մարման դեպքում- 16.5%<br><br>**EUR**<br>**ԱԳ դեպքում՝**<br>15-24 ամիս մարման դեպքում- 11.0%,<br>25-36 ամիս մարման դեպքում – 12.0%,<br>37 և ավել ամիս մարման դեպքում- 13.0%<br><br>**ՏՄ դեպքում՝**<br>15-24 ամիս մարման դեպքում- 12.0%,<br>25-36 ամիս մարման դեպքում – 13.0%,<br>37 և ավել ամիս մարման դեպքում- |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 14.0% |
| | | | | | |
| 1.4 | Տարեկան փաստացի տոկոսադրույք | AMD 17.6-23.6% | AMD 20.3-23.9% | USD 15.8-21%<br>EUR 12.5-21.6% | USD 16.7-23.4%<br>EUR 13.7-21.6% |
| 1.5 | Տոկոսագումարների հաշվարկման կարգ | Տոկոսադրույքը կիրառվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ | | Տոկոսադրույքը կիրառվում է վարկային գծի օգտագործված մասի նկատմամբ | |
| 1.6 | Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն (հաշվարկվում է գրավի գնահատված լիկվիդային արժեքի նկատմամբ) | Բնակարանների դեպքում<br>• Գոտի 1 – 70 %<br>• Գոտի 2 – 60 %<br>• Գոտի 3 – 40 % | Բնակարանների դեպքում<br>• Գոտի 1 – 60 %<br>• Գոտի 2 – 50 %<br>• Գոտի 3 – 30 % | Բնակարանների դեպքում<br>• Գոտի 1 – 70 %<br>• Գոտի 2 – 60 %<br>• Գոտի 3 – 40 % | Բնակարանների դեպքում<br>• Գոտի 1 – 60 %<br>• Գոտի 2 – 50 %<br>• Գոտի 3 – 30 % |
| | | Բնակելի տների և հասարակական նշանակության տարածքների դեպքում<br>• Գոտի 1 – 60 %<br>• Գոտի 2 – 50 %<br>• Գոտի 3 – 40 % | Բնակելի տների և հասարակական նշանակության տարածքների դեպքում<br>• Գոտի 1 – 50 %<br>• Գոտի 2 – 40 %<br>• Գոտի 3 – 30 % | Բնակելի տների և հասարակական նշանակության տարածքների դեպքում<br>• Գոտի 1 – 60 %<br>• Գոտի 2 – 50 %<br>• Գոտի 3 – 40 % | Բնակելի տների և հասարակական նշանակության տարածքների դեպքում<br>• Գոտի 1 – 50 %<br>• Գոտի 2 – 40 %<br>• Գոտի 3 – 30 % |
| | | Շարժական գույքի դեպքում (մինչև 8 նստատեղ ունեցող մարդատար տրանսպորտային միջոց)<br>3-5 տարվա թողարկված տմ – 40%<br>Մինչև 3 տարվա տմ– 50% | | | |
| 1.7 | Ժամկետ | Անշարժ գույքի դեպքում՝ 15-ից 120 ամիս<br>տրանսպորտային միջոցի դեպքում՝ 15-60 ամիս | | | |
| 1.8 | Մարման եղանակ | Հաճախորդի ընտրությամբ՝<br>• անուիտետային վճարումներ,<br>• վարկի գումարի ամենամսյա հավասարաչափ մարում հաշվեգրված տոկոսների ամենամսյա մարում | | Վարկային գծի գումարի ամենամսյա հավասարաչափ մարում (սահմանաչափի ամենամսյա հավասարաչափ նվազեցում անկախ վարկային գծի օգտագործումից) և հաշվեգրված տոկոսների ամենամսյա մարում | |
| 1.9 | Վարկային արձակուրդի տրամադրում (սույն կետը կիրառելի է միայն անշարժ գույքի գրավով ապահովված վարկերի դեպքում) | ❖ ***Վարկային արձակուրդի փրամադրման ժամկետ***<br>1-10 ամիս (Վարկի ամբողջ ժամանակահատվածում)<br><br>❖ ***Վարկային արձակուրդի փրամադրման պարբերականությունը***<br>Վարկային արձակուրդը կարող է տրամադրվել մեկ տարում առավելագույնը 2 անգամ՝ մինչև 2 ամիս ժամկետով, ընդհանուր վարկի գործողության ընթացքում չգերազանցելով գումարային 10 | | - | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ամիսը (ընդ որում արձակուրդային ժամկետները չեն հաջորդել մեկը մյուսին):<br><br>❖ ***Վարկային արձակուրդի ընթացքում մարումներ***<br>Վարկային արձակուրդի տրամադրումն իրականացվում է միայն Վարկի մայր գումարի համար, որի ընթացքում վճարվում են միայն հաշվեգրված տոկոսները, իսկ այդ ամիսների գծով նախատեսված վարկի գումարի մարումները հավասարաչափ բաշխվում են վարկի մնացած ժամկետի վրա:<br><br>❖ ***Վարկային արձակուրդի տրամադրման միանվագ միջնորդավճար /հիմք է ընդունվում վարկի մնացորդային գումարը/***<br>• Մինչև 2.000.000 ՀՀ դրամ գումարի դեպքում՝ 10,000 ՀՀ դրամ<br>• 2.000.001 – 5.000.000 ՀՀ դրամ գումարի դեպքում՝ 20,000 ՀՀ դրամ<br>• 5.000.001 – 15.000.000 ՀՀ դրամ գումարի դեպքում՝ 35,000 ՀՀ դրամ<br>• 15.000.001 – 35.000.000 ՀՀ դրամ գումարի դեպքում՝ 50,000 ՀՀ դրամ<br><br>❖ ***Վարկային արձակուրդից կարող են օգտվեն ABB – էքսպրա վարկ ունեցող վարկառուները, ովքեր***<br>1. Վարկային արձակուրդի որոշում կայացնելու պահին Վարկառուի վարկային պատմությանը ներկայացվող պահանջները պետք է համապատասխանեն 5.3 կետի պահանջներին,<br>2. Բանկում գործող ABB–էքստրա վարկը պետք է սպասարկված լինի առնվազն 1 տարի, եթե տվյալ վարկառուն նախկինում Բանկում այլ վարկային պարտավորություններ չի ունեցել,<br>3. 2-րդ կետի պայմանը կիրառելի չէ, եթե Վարկառուն Բանկում վերջին երեք տարվա ընթացքում ունեցել է վարկային պարտավորություններ և հանդիսացել է պարտաճանաչ վարկառու: | | | |
| 1.10 | Նվազագույն գումար | 1,000,000 ՀՀ դրամ | | 2000 ԱՄՆ դոլար/եվրո | |
| 1.11 | Առավելագույն գումար (մեկ փոխառուի գծով առավելագույն գումար) | <u>Անշարժ գույք</u><br>• Գոտի 1 – 35,000,000 ՀՀ դրամ<br>• Գոտի 2 – 25,000,000 ՀՀ դրամ<br>• Գոտի 3 – 20,000,000 ՀՀ դրամ | <u>Անշարժ գույք</u><br>20,000,000 ՀՀ դրամ | <u>Անշարժ գույք</u><br>• Գոտի 1 – 70,000 ԱՄՆ դոլար/եվրո<br>• Գոտի 2 – 50,000 ԱՄՆ դոլար/ եվրո<br>• Գոտի 3 – 40,000 ԱՄՆ դոլար/ եվրո | <u>Անշարժ գույք</u><br>40,000 ԱՄՆ դոլար/եվրո |
| | | ՏՄ – 18,000,000 | ՏՄ – 10,000,000 ՀՀ դրամ | ՏՄ – 35,000 ԱՄՆ դոլար/եվրո | ՏՄ – 20,000 ԱՄՆ դոլար/եվրո |
| 1.12 | Վարկային գծի տեսակ | - | | Մասնակի վերականգնվող վարկային գիծ | |
| 1.13 | Վարկային գծի չօգտագործված մասի նկատմամբ հաշվեգրվող | 0% | | | |

| | | | |
|---|---|---|---|
| | տոկոսադրույք | | |
| 1.14 | Տրամադրման եղանակ | • Միանվագ,<br>• Հաճախորդի ընտրությամբ՝ կանխիկ կամ անկանխիկ | Վարկային գիծը տրամադրվում է քարտային հաշվին՝ MC Standard կամ Visa Classic քարտին: |
| 1.15 | Վաղաժամկետ մարում | Թույլատրվում է, Տույժեր և տուգանքներ չկան | |
| 1.16 | Այլ ֆինանսական կազմակերպություն տեղափոխելու դեպքում վաղաժամկետ մարման միջնորդավճար /սույն կետը կիրառելի է միայն անշարժ գույքի գրավով ապահովված վարկերի/վարկային գծերի համար/ | մինչև 15 մլն ՀՀ դրամ/համարժեք արտարժույթ/ տրամադրված վարկերի/վարկային գծերի դեպքում ՝ 0 ՀՀ դրամ<br><br>15 մլն ՀՀ դրամ/համարժեք արտարժույթ/ և ավել գումարի տրամադրված վարկերը/վարկային գծերի դեպքում ՝ մարվող գումարի 1% | |
| **2.** | **Բանկի միջնորդավճար** | | |
| 2.1 | Դիմում-հայտի ուսումնասիրման միանվագ միջնորդավճար | 5 000 ՀՀ դրամ<br>• Այլ ֆինանսական կազմակերպություններից վարկի/վարկային գծի տեղափոխման դեպքում՝ 0 ՀՀ դրամ | |
| 2.2 | Սպասարկման միանվագ միջնորդավճար/գանձվում է տրամադրման պահին/ | վարկի գումարի 2.3%* | Պայմանագրի գումարի 2%* |
| | | * Այլ ֆինանսական կազմակերպություններից վարկի/վարկային գծի մնացորդի տեղափոխման, ինչպես նաև ABB–ԷՔՍՏՐԱ և ABB–ԷՔՍՏՐԱ+ գործող վարկի/վարկային գծի շրջանակներում վերավարկավորվելու դեպքում՝ 0 ՀՀ դրամ (սակագինը կիրառվում է եթե տրամադրվում է նոր վարկ/վարկային գիծ, որի հաշվին կիրականացվի Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ում գործող վարկի/վարկային գծի մարումը):<br>(Սույն սակագինը գործում է, նաև այլ ֆինանսական կառույցից տեղափոխվող կամ Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ում վերաձևակերպվող վարկի/վարկային գծի սահմանաչափից ավել մինչև 20%-ը հավելյալ վարկավորման դեպքում, ընդ որում տեղափոխվող/վերաձևակերպվող պարտավորության սահմանաչափից ավել մասը չի կարող գերազանցել 5,000,000 մլն ՀՀ դրամը կամ համարժեք արժույթը: Տեղափոխվող/վերաձևակերպվող վարկի/վարկային գծի սահմանաչափի 120%-ից ավել վարկավորման դեպքում գանձվում է միջնորդավճար տարբերության չափով՝ համաձայն 2.2 կետի):<br>Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ում ABB–ԷՔՍՏՐԱ և ABB–ԷՔՍՏՐԱ+ վարկը/վարկային գիծը վերաձևակերպելու դեպքում վարկի/վարկային գծի տոկոսադրույքը կարող է լինել սույն վարկատեսակով սահմանված տոկոսադրույքից 2% պակաս ՝ Վարկային կոմիտեի որոշմամբ, ընդ որում , սույն կետի կիրառման համար հաճախորդը գործող վարկը պետք է սպասարկած լինի առնվազը ժամկետի 30% : | |
| 2.3 | Վարկային միջոցների կանխիկացում | 0% | Քարտից կանխիկացում Հայբիզնեսբանկի բանկոմատներից՝ 0%,<br>Քարտից կանխիկացման մնացած սակագները՝ համաձայն Բանկում գործող ծառայությունների սակագներով տվյալ տեսակի վարկային քարտի համար սահմանված սակագների |
| **3.** | **Ապահովվածություն** | | |
| 3.1 | Գրավի առարկա | • Անշարժ գույք կամ<br>• Մինչև 8 նստատեղ ունեցող մարդատար տրանսպորտային միջոց<br><br>Եթե Վարկառուն և Գրավատուն տարբեր անձինք են, ապա Գրավատուն պետք է հանդիսանա նաև Երաշխավոր | |
| 3.2 | Անշարժ գույքի գրավի գտնվելու վայրը | • Գոտի 1 – ք.Երևան (բացառությամբ Նուբարաշեն, Վարդաշեն, Սարի թաղ, Կոնդ , Նոր Խարբերդ և Նորագյուղ թաղամասերի, Կրիվոյի փ., Ֆիրդուսի փ., Ֆրիկի փ. տները), ք.Աբովյան, ք.Արտաշատ, ք.Արմավիր, ք.Աշտարակ, ք.Գյումրի, , ք.Դիլիջան, ք.Էջմիածին, ք.Ծաղկաձոր, , ք.Մասիս, , ք.Ջերմուկ/աջափնյա/, , ք.Ստեփանակերտ, ք.Վանաձոր | |

| | | |
|---|---|---|
| | | • Գոտի 2 – ք.Ագարակ, ք.Արարատ, ք. Ապարան, ք.Արթիկ, ք.Գորիս,ք. Գավառ, ք. Հրազդան, ք. Մարտունի, Ք. Սևան, ք.Եղեգնաձոր, ք.Թալին, ք.Իջևան, ք.Կապան, ք.Մեղրի, ք.Մարալիկ, ք.Նոր-Հաճըն, ք.Նոյեմբերյան, ք.Սիսիան, ք.Սպիտակ, ք.Վեդի, ք.Տաշիր, ք.Քաջարան, և Առինջ, Արգավանդ, Արզնի, Գառնի, Ձովունի, Թաիրով, Մուղնի, Ձորաղբյուր, Պտղնի,Պռոշյան, Քասախ, Ջրվեժ, Փարաքար, Օհանավան, , Փարպի, Կարբի, գյուղեր<br><br>• Գոտի 3 - ՀՀ այլ բնակավայրեր՝ Բանկի համար ընդունելի գույք |
| 3.3 | Գույքին ներկայացվող պահանջներ | **Անշարժ գույք**<br>• գրավ կարող է հանդիսանալ բնակելի անշարժ գույք, ընդ որում՝անշարժ գույքը պետք է ունենա քարե, պանելային կամ երկաթբետոնե կառուցվածք (բացառությամբ միջնապատերի և միջհարկային ծածկերի), ինչպես նաև հասարակական նշանակության տարածք (խանութ, սրճարան/ռեստորան, վարսավիրանոց, օֆիսային տարածք).<br>• անշարժ գույքը պետք է ունենա 80 և ավելի տոկոս փաստացի ավարտվածության աստիճան, որը պետք է ամրագրված լինի իրավունքի պետական գրանցման վկայականում, ինչպես նաև պարտադիր ունենա անցկացված անհրաժեշտ կոմունիկացիաներ / /.<br>• գրավի առարկա չեն կարող լինել այն բնակելի տները, որոնք ունեն 2 և ավել ընդհանուր պատեր այլ սեփականատերերի գույքերի հետ, և որոնք չունեն առանձնացված մուտք փողոցից.<br>• բազմաբնակարան շենքում գտնվող անշարժ գույքը պետք է գտնվի 1-ին հարկում կամ 1-ից բարձր հարկերում.<br>• նկուղային տարածքներում գտնվող անշարժ գույքը որպես գրավ չի ընդունվում.<br>• անշարժ գույքը պետք է ապահովված լինի անհրաժեշտ կոմունիկացիաներով (ջուր, հոսանք, կոյուղի).<br>• անշարժ գույքը չպետք է գտնվի 2-րդից ավել աստիճանի վթարային շենքում կամ ունենա 2-րդից ավել վթարայնության աստիճան.<br>• եթե անշարժ գույքը պատկանում է ֆիզիկական անձանց բաժնային սեփականության իրավունքով, ապա գրավ են հանդիսանում բոլոր բաժնեմասերը միաժամանակ, իսկ գրավատու են հանդիսանում գրավի բոլոր համասեփականատերերը.<br>• եթե գրավի կազմում առկա է հողակտոր, որի կադաստրային արժեքը վճարված չէ, ապա վարկ/գրավ հարաբերակցությունը հաշվարկվելիս հողակտորի կադաստրային արժեքը գրավի գնահատված արժեքից նվազեցվում է,<br>• գրավի առարկա չի կարող լինել այն անշարժ գույքը, որի ընդհանուր վիճակի վերաբերյալ Գնահատող ընկերության կողմից տրվել է անբավարար գնահատական:<br><br>**Շարժական գույք**<br>• Գրավի առարկա կարող է հանդիսանալ մինչև 5 տարվա արտադրության և մինչև 8 նստատեղ ունեցող մարդատար տրանսպորտային միջոցը,<br>• Գրավի առարկա կարող է հանդիսանալ միայն Եվրոպայի, ԱՄՆ և Ճապոնիայի արտադրության ավտոմեքենաները (գրավի առարկա չեն կարող հանդիսանալ այլ երկրների արտադրության, այդ թվում նաև Ռուսական արտադրության տրանսպորտային միջոցները)<br>• Գրավի առարկա չեն կարող հանդիսանալ որպես տաքսի և երթուղային տաքսի շահագործվող/ած տրանսպորտային միջոցները,<br>• Տեղական շուկայից ձեռքբերվող տրանսպորտային միջոցը չի կարող հանդիսանալ գրավի առարկա, եթե տվյալ մեքենայի սեփականության իրավունքը ծագել է վարկային հայտ ներկայացնելուն նախորդող 3 ամսվա ընթացքում |
| 3.4 | Լրացուցիչ պայման | Գրավատուն պարտադիր պետք է ներկայացնի սեփականության իրավունքի ծագման հիմքերը, և եթե սեփականության իրավունքը Գրավատուին է փոխանցվել նվիրատվության գործարքի հիման վրա և սեփականությունը փոխանցվել է Վարկի ստացման վերաբերյալ դիմում-հայտի ներկայացնելուն նախորդող հինգ տարվա ընթացքում, ապա.<br>1. պահանջվում է լրացուցիչ ապահովվածություն՝ նվիրատուի (մի քանի նվիրատուների պարագայում՝ բոլոր նվիրատուների) երաշխավորություն/ներ, կամ |

| | | |
|---|---|---|
| | | 2. պահանջվում է լրացուցիչ ապահովվածություն՝ երրորդ անձի երաշխավորություն, ընդ որում վարկի գումարը չի կարող գերազանցել գրավի գնահատված լիկվիդային արժեքի 50%-ը: Սույն կետի համաձայն երաշխավորի վարկային պատմությանը ներկայացվող պահանջները սահմանվում են համաձայն Վարկառուի վարկային պատմությանը ներկայացվող պահանջների:<br><br>*սույն ենթակետը կիրառելի չէ, եթե Վարկի ստացման վերաբերյալ դիմում-հայտի ներկայացման պահին նվիրատուն մահացած է, ինչպես նաև եթե նվիրատուն հանդիսանում է Գրավատուի (նվիրառու) ընտանիքի անդամ (հայր, մայր, պապ, տատ, երեխա)* |
| **4** | **Գրավի գնահատում և ապահովագրություն** | |
| 4.1 | Գրավի արժեքի գնահատում | Գնահատումը պետք է իրականացվի Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող Ընկերության կողմից |
| 4.2 | Ապահովագրություն | <u>Անշարժ գույքի գրավի դեպքում՝</u><br>• Անշարժ գույքի գրավի ապահովագրություն - կամավոր<br>• Դժբախտ պատահարներից ապահովագրություն – կամավոր<br>*Ապահովագրումը իրականացվում է տարեկան կտրվածքով, բացառապես Բանկի հետ համագործակցող Ընկերությունների կողմից: Անշարժ գույքի գրավի և դժբախտ պատահարներից ապահովագրական գումարները, հաշվարկվում են վարկի մնացորդային գումարի/վարկային գծի սահմանաչափի նկատմամբ:*<br><br><u>Շարժական գույքի գրավի դեպքում՝</u><br>• Ավտոմեքենայի կասկո ապահովագրություն – պարտադիր (իրականացվում է տարեկան կտրվածքով)<br>*Գրավադրվող գույքի Կասկո ապահովագրումը իրականացվում է տարեկան կտրվածքով, բացառապես Բանկի հետ համագործակցող Ընկերությունների կողմից: Ապահովագրական գումարը հաշվարկվում է Վարկի գումարի մնացորդի նկատմամբ.* |
| **5.** | **Վարկառուի/Գրավատուի/Երաշխավորի նկատմամբ պահանջներ** | |
| 5.1 | Վարկառու | 21 տարին լրացած ՀՀ-ում կամ ԱՀ-ում գրանցված ռեզիդենտ ֆիզիկական անձ, որի տարիքը մինչև վարկի/վարկային գծի մարման ժամկետը չի գերազանցում 65 տարին |
| 5.2 | Վարկառուի եկամուտներ | • Առաջնային եկամուտներ (պարտադիր)<br>• Նորք տեղեկատվավերլուծական համակարգում եկամուտների առկայություն, ընդ որում վերջին աշխատատեղում՝ առնվազն 3 ամսվա աշխատանքային փորձ (ԱՀ տարածքում գործող գործատուների, ինչպես նաև ՀՀ ուժային կառույցների աշխատողների դեպքերում (որոնց տվյալները առկա չեն Նորք տեղեկատվավերլուծական համակարգում)՝ գործատուի կողմից տրամադրված տեղեկանքի հիմնավորմամբ)<br>• կենսաթոշակ՝ հաստատված լիազոր մարմնից ներկայացված տեղեկանքի հիմնավորմամբ,<br>• ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ, շահաբաժիններ և փաստաթղթերով հիմնավորված այլ եկամուտներ (բիզնեսը պետք է լինի գործող առնվազն 6 ամիս):<br><br>• Երկրորդային եկամուտներ (ոչ պարտադիր)<br>• վարձակալությունից ստացված եկամուտները, որոնք ամրագրված են վարձակալության պայմանագրով՝ հաստատված նոտարի կողմից և գրանցված Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից, ընդ որում՝ վարձակալության պայմանագիրը պետք է կնքված լինի ոչ պակաս, քան վարկային հայտ ներկայացնելու պահից երեք ամիս առաջ (բացառությամբ վարձակալության պայմանագրի վերակնքման դեպքերի), պայմանագիրը պետք է լինի առնվազն մեկ տարի ժամկետով; Եթե վարձակալության պայմանագիր չկա կնքված, ապա ներկայացվում է վարձակալության տրվող գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը վարկառուի կամ կնոջ/ամուսնու անունով,<br>• բանկում ներդրված ավանդային պայմանագրի համաձայն ստացվելիք տոկոսագումարները, ընդ որում՝ավանդային պայմանագիրը պետք է կնքված լինի ոչ պակաս, քան վարկային հայտ ներկայացնելու պահից երեք ամիս առաջ, պայմանագիրը պետք է լինի առնվազն մեկ տարի ժամկետով:<br>• Հայբիզնեսբանկում վերջին 3 ամիսների ընթացքում անընդմեջ ստացված դրամական փոխանցումներ, իսկ այլ բանկերում՝ վերջին 6 ամսվա ընթացքում անընդմեջ |

| | | |
|---|---|---|
| | | ստացված դրամական փոխանցումներ<br>• վճարովի ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներ (ուսուցիչների, դասախոսների, իրավաբանների, SS մասնագետների, բժիշկների համար) – պահանջվում են հիմնավոր փաստաթղթեր |
| 5.3 | Վարկառուի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ | • Վարկի/Վարկային գծի տրամադրման որոշումը կայացնելու պահին Գործող վարկային պարտավորությունները (վարկեր, երաշխավորություններ) չպետք է լինեն ժամկետանց և/կամ դասակարգված որպես չաշխատող, և<br>• Վերջին 12 ամիսների բոլոր (մարված և գործող) վարկերի/վարկային գծերի ժամկետանց օրերի գումարային քանակը չպետք է գերազանցի 24 օրացուցային օրը:<br><br>Այլ ֆինանսական կազմակերպությունից տեղափոխման դեպքում տվյալ վարկը/վարկային գիծը պետք է սպասարկված լինի առնվազն 12 ամիս |
| 5.4 | Վարկառուի հետ բնակվող/խնամակալության տակ գտնվող անձանց վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ | • Վարկի/Վարկային գծի տրամադրման որոշումը կայացնելու պահին Գործող վարկային պարտավորությունները (վարկեր, երաշխավորություններ) չպետք է լինեն ժամկետանց և/կամ դասակարգված որպես չաշխատող:<br><br>• Բանկում գործող Հիմնական պայմանագրի շրջանակներում/Բանկում գործող անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագրի պարագայում, նոր Վարկի/Վարկային գծի տրամադրման դեպքում, պարտադիր են հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝<br>- Վարկառուի հետ բնակվող/խնամակալության տակ գտնվող անձանց վարկային պարտավորությունները (վարկեր, երաշխավորություններ) չպետք է լինեն դասակարգված ոչ ավել քան հսկվող դասը, և<br>- Վարկառուի վարկային պատմությունը պետք է համապատասխանի 5.3 կետով սահմանված Վարկառուի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներին, և<br>- Վարկը/Վարկային գիծը պետք է սպասարկված լինի Բանկում առնվազն 6 ամիս: |
| 5.5 | Գրավատու (եթե Վարկառուն և Գրավատուն տարբեր անձինք են) | Մի քանի գրավատուների առկայության դեպքում առնվազն մեկ գրավատուն պետք է հանդիսանա նաև երաշխավոր:<br><br>Գրավատուի/ների վարկային պատմությանը ներկայացվող պահանջները սահմանվում են համաձայն Վարկառուի վարկային պատմությանը ներկայացվող պահանջների |
| 5.6 | Վարկարժանության գնահատման ընդհանուր սկզբունքը | Սույն կետը կիրառելի է վարկառուի եկամուտների պահանջի առկայության դեպքում<br>Ընդհանուր պարտքային վճարումների և զուտ եկամուտների առավելագույն հարաբերակցությունը (OTI գործակից) չպետք է գերազանցի 55% |
| **6.** | **Լրացուցիչ պայմաններ** | |
| 6.1 | Դիմում-հայտի մերժումը | Հաճախորդը չի համապատասխանում Բանկի կողմից սահմանված.<br>- Վարկարժանության չափանիշներին<br>- Վճարունակության չափանիշներին<br>- Վարկունակության չափանիշներին |
| 6.2 | ***Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում*** | • ***Ժամկետանց տոկոսների գծով Բանկը Վարկառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց գումարի 0,13% չափով,***<br>• ***Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում՝ մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝***<br>***1) <u>Տույժ/տուգանքներ</u>***<br>***2) <u>Տոկոսագումարներ</u>***<br>***3) <u>Մայր գումար</u>***<br>• ***Վարկը/Վարկային գիծը Պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարելու դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է և այդ օրվանից ժամկետանց գումարի նկատմամբ մինչև ժամկետանց պարտքի փաստացի մարումը հաշվարկվում են տոկոսներ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով*** |
| | | ***ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՄԻՆՉԵՎ 7 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ*** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | *ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:*<br><br>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ: | | |
| | | **Բանկն իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածել կամ իրացնել այն** | | |
| | | **Գրավադրված անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու դեպքում իրացումից ստացված գումարի հաշվին գրավով ապահովված պահանջն ամբողջությամբ չբավարարվելու դեպքում տարբերությունը բռնագանձել վարկառուի այլ գույքից:** | | |
| **6.3** | *Հաճախորդի այլ ծախսեր* | ✓ ***Գրավի գնահատման հետ կապված ծախսեր՝ համաձայն Բանկի հետ համագործակցող գնահատող ընկերությունների կողմից սահմանված սակագների (12.000-35.000 ՀՀ դրամ)***<br>✓ ***Նոտարական ձևակերպման հետ կապված ծախսեր (13.000-20.000 ՀՀ դրամ)***<br>✓ ***Կադաստրային ձևակերպման հետ կապված ծախսեր (36.000 ՀՀ դրամ)*** | | |
| | | - | ***Պլաստիկ քարտի փարեկան սպասարկման վճար (3,000-30,000 ՀՀ դրամ)***<br>Վարկային գծի պայմանագրի ողջ ժամանակահատվածում պլաստիկ քարտի առկայությունը պարտադիր է (քարտի կորստի կամ ժամկետը լրանալու դեպքում այն վերաթողարկվում է): | |
| 6.4 | Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետ | մինչև 15 աշխատանքային օր (կախված վարկի/վարկային գծի գումարի մեծությունից) | | |
| 6.5 | Վարկի ձևակերպման վայր | Բանկի Գլխամասային գրասենյակում և բոլոր մասնաճյուղերում (բացառությամբ Արարատյան և Արշակունի մասնաճյուղերի) | | |
| 6.6 | Վարկի ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթեր | | | |
| | *Նախնական փաստաթղթեր* | | Վարկառուից պահանջվող փաստաթղթեր | Երաշխավորից պահանջվող փաստաթղթեր (սահմանված դեպքում) |
| | Անձը հաստատող փաստաթուղթ՝ Անձնագիր կամ նույնականացման քարտ | | ✓ | ✓ |
| | Սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ, բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից (նույնականացման քարտ ներկայացնելու դեպքում՝ չի պահանջվում) | | ✓ | ✓ |
| | Հաճախորդի հետ բնակվող/խնամակալության տակ գտնվող անձանց անձը հաստատող փաստաթղթերի պատճենները (չափահաս անձանց դեպքում՝ նաև նրանց ԱՔՌԱ-ից հարցման համաձայնությունը/ները) | | ✓ | - |
| | Ընտանեկան վիճակը հաստատող փաստաթղթերի /ամուսնության վկայական, ամուսնության պայմանագիր, ամուսնալուծության վկայական և այլն/ պատճենները (առկայության դեպքում | | ✓ | ✓ |
| | Սույն պայմանների 5.2 կետով սահմանված եկամուտների պահանջ լինելու դեպքում՝<br>• Երկրորդային եկամտի ապացույցներ<br>• Տեղեկանք բնակության վայրից (համատեղ տնտեսություն վարող անձանց վերաբերյալ) տրված իրավասու մարմնի (տեղական ինքնակառավարման մարմին, ԲՇՏ, Համատիրություն, Լիազոր ներկայացուցիչ և այլն) կողմից<br>• ՍՀ տարածքում գործող գործատուների, ինչպես նաև ՀՀ ուժային կառույցների աշխատողների դեպքում (որոնց տվյալները առկա չեն Նորք տեղեկատվավերլուծական համակարգում)՝ զբաղվածության և եկամուտների մասին տեղեկանք՝ գործատուի պաշտոնական բլանկի վրա տպված, որտեղ նկարագրված կլինի տվյալ ընկերությունում | | ✓<br>✓<br>✓ | -<br>-<br>- |

| | | | |
|---|---|---|---|
| | զբաղեցրած պաշտոնի, հիմնական աշխատանքային ստաժի և ամսական աշխատավարձի չափի վերաբերյալ տեղեկատվություն | | |
| | Գրավադրվող գույքի սեփականատերերի անձնագրերը | ✓ | - |
| | Գրավադրվող գույքի սեփականության իրավունքի վկայականի պատճենը | ✓ | - |
| | Գրավադրվող գույքի սեփականության իրավունքի ծագման հիմքերը | ✓ | - |
| | Գրավադրվող գույքի գնահատման հաշվետվություն | ✓ | - |
| | Տ/Մ գրավադրման դեպքում՝ տեխ անձնագրի պատճենը | ✓ | - |
| | ***Վարկի տրամադրման որոշում կայացնելուց հետո պահանջվող փաստաթղթեր*** | | |
| | Գրավադրվող գույքի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք | ✓ | - |
| | Գրավի իրավունքի գրանցման վկայագիր | ✓ | - |
| | Խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվություն (ըստ անհրաժեշտության), երբ գույքի սեփականատերերի ցանկում ներառված կլինեն անչափահասները | ✓ | - |
| | Այլ փաստաթղթեր՝ըստ անհրաժեշտության | ✓ | ✓ |

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

Տեղեկացնում ենք, որ

- եթե վարկառուն չկատարի պարտավորությունները, ապա Դուք եք վճարելու իր փոխարեն, վատանալու է Ձեր վարկային պատմությունը և զրկվելու եք Ձեր գույքից,
- Ձեզ տրամադրվելու է վարկային, երաշխավորության պայմանագրերի և մարման գրաֆիկի օրինակ,
- Հաղորդակցումն իրականացվելու է Ձեր կողմից ընտրված եղանակով,
- 7 օր առաջ ծանուցվելու եք պայմանագրի պայմանների փոփոխության մասին,
- 1 օր առաջ հիշեցում է ուղարկվելու առկա պարտավորության վերաբերյալ,
- Վարկի մարման ուշացման դեպքում՝ ամենաուշը մեկ օր հետո, Ձեզ տեղեկացնելու են այդ մասին:

## ԵՐԱՇԽԱՎՈՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

- Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին,
- Վարկառուից հետ ստանալու Ձեր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

**Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները համաձայն Բանկում գործող ծառայությունների սակագների:**

## ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

**ՁԵՐ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ՉԿԱՏԱՐԵՔ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:**

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ԲՈԼՈՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻՆ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ԱՅՍՏԵՂ:**

**Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի բանաձև.**
**Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.**

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝
i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR).
A –տրամադրվող վարկի սկզբնական գումարն է.
n –վարկի մարմանն ուղղված վճարի թիվը.
N -վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը.
Kn-վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը.
Dn-վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով.
i -ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են վարկավորման պայմանագրից կամ այլ կերպ:
Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման համար կարող եք օգտվել Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման հաշվիչից http://www.armbusinessbank.am/am/page/Crediting հղումով:

**<u>Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ</u>**.

- Վարկի գումար 10,000,000 ՀՀ դրամ
- Ժամկետ – 120 ամիս
- Տարեկան տոկոսադրույք – 16%
- Վարկի ուսումնասիրության միանվագ միջնորդավճար – 5,000 ՀՀ դրամ
- Վարկի սպասարկման միանվագ միջնորդավճար – վարկի գումարի 2,3%
- Վարկային միջոցների կանխիկացում – 0%
- Գրավի առարկայի գնահատում – 20,000 ՀՀ դրամ
- Նոտարական վճար – 20,000 ՀՀ դրամ
- Կադաստրային վճար – 36,000 ՀՀ դրամ
- Վարկի և տոկոսագումարների մարման եղանակ - անուիտետային

**Տարեկան փաստացի տոկոսադրույքը կազմում է 18,20 %**
Պայմանավորված վարկի գումարով, ժամկետով, մարումների հաճախականությամբ և այլ օժանդակ ծառայությունների արժեքի փոփոխություններով՝ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է տարբեր լինել վերոնշյալ օրինակից:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է հանդիսացել հետևյալ փոխարժեքները՝ USD՝ 476.1, EUR՝ 525.71 30.08.2019թ դրությամբ:
Տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ կախված ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:

**ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԻՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:**

**«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն սպառողական վարկային հայտի վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո, նախքան սպառողական վարկային պայմանագրի կնքումը տրամադրում է ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ի»:**
**ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՁԵԶ, ԵՐԱՇԽԱՎՈՐ(ՆԵՐ)ԻՆ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵԶ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:**

**՛Ձեր ֆինանսական տեղեկատուն՛՛ համակարգին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ [www.fininfo.am](http://www.fininfo.am):**

**’’’’՛՛ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ՛՛ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:**

**Բանկի վերաբերյալ տվյալներ.**
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԵ Փակ Բաժնետիրական Ընկերություն
Հասցե՝ 0010, ՀՀ, ք.Երևան,Նալբանդյան 48, Հեռ.՝ (+37410) 59-20-20, (+37460) 37-25-00, ֆաքս՝ +37410 59 20 64
Ինտերնետային կայք՝ www.armbusinessbank.am, Էլ. Փոստ՝ info@armbusinessbank.am
Գրանցման վկայական՝ թիվ 0176, տրված 10.12.1991թ., Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 40, տրված 10.12.1991թ.
Ծառայությունների ցանկը, որը Բանկը իրավունք ունի մատուցել՝ համաձայն “Բանկերի և բանկային գործունեության մասին” ՀՀ օրենքի Գլուխ 4-ի: